ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ
ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ
ՀԻՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ
ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

MATENADARAN
MASHTOTS INSTITUTE
OF ANCIENT MANUSCRIPTS
FOUNDATION

Երևան, Մաշտոցի պող. 53, ☎ 51-30-00

Yerevan, Mashtots Av. 53, ☎51-30-00

ք. Երևան **2024թ հոկտեմբերի 23**

ԳԱՐԱՆՏ 24 ՍՊԸ-ին
(Ք. Երևան, Նալբանդյան Փ շ 25/14 76
creative.business1920@gmail.com)

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԳԱՐԱՆՏ 24 ՍՊԸ-ԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Մատենադարան» Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ» հիմնադրամի կարիքների համար մուտքային տոմսերի ձեռքբերման նպատակով 2024թ. օգոստոսի 31-ին հայտարարվել է «ՄԱՏ-ԷԱՃԱՊՁԲ-48/24» ծածկագրով գնման ընթացակարգ (այսուհետ՝ Ընթացակարգ):

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի թիվ 2՝ հայտերի բացման և գնահատման արձանագրության 7-րդ կետի համաձայն ԳԱՐԱՆՏ 24 ՍՊԸ-ն (այսուհետ՝ Ընկերություն) ճանաչվել է ընտրված՝ 1-ին տեղ զբաղեցրած մասնակից:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հաջորդ՝ 2024թ. հոկտեմբերի 22-ի երրորդ նիստի 1-ին կետով ամրագրվել է, որ Ընկերությանը 05.10.2024թ ներկայացվել է պայմանագիր կնքելու առաջարկ, սակայն վերջինս սահմանված ժամկետում համակարգ չի վերբեռնել պայմանագիրը: Նույն նիստի արձանագրության 2-րդ կետով գնահատող հանձնաժողովը որոշել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիման գնման ընթացակարգը հայտարարել չկայացած:

Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո սույն օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված ժամկետում չի ստորագրում պայմանագիրը կամ պատվիրատուին չի ներկայացնում պայմանագրի և (կամ) որակավորման ապահովումը, իսկ կնքվելիք պայմանագրով կանխավճար նախատեսված լինելու դեպքում՝ նաև կանխավճարի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից»

Հիմք ընդունելով վերոգրյալը, ինչպես նաև առաջնորդվելով Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով՝ որոշեցի Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով սույն որոշումը կայացվելու օրվան հաջորդող օրը այն տրամադրել լիազորված մարմնին և մասնակցին

ՏՆՕՐԵՆ **Ա. ԽԶՄԱԼՅԱՆ**